ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA
DEPUTY MINISTER

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
0010, Ереван, ул. Мелик-Адамяна 1
1 Melik-Adamyan str., Yerevan, 0010
Հեռ./Тел./Phone (+374 60) 700 103

25.11.2013. № 6.ՄԿ/6.2-5/17951-13

Ձեր №

«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ
պրն. Փ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1, 206 սենյակ)

Հարգելի պարոն Թադևոսյան

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկել է ս.թ. նոյեմբերի 6-ի Ձեր թիվ 019 գրությամբ բարձրացված հարցը՝ կապված «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի համաձայն ամսական կամ եռամսյակային ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից ավելացված արժեքի հարկի հաշվարկները ամսական կամ եռամսյակային կտրվածքով ներկայացնելու հետ, ինչի կապակությամբ հայտնում ենք հետևյալը:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն, իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ կարող է տալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ իրավական ակտը կիրառող գործադիր իշխանության մարմինը: Ընդ որում, մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի «Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1007-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ կետի

համաձայն, նույն կարգով սահմանված իրավական ակտերի վերաբերյալ պարզաբանումները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից՝ դրանք նույն կարգին համապատասխան համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից Ձեր վերոնշյալ գրությամբ ներկայացված հարցի վերաբերյալ պաշտոնական պարզաբանման նախագիծ մշակելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության քննարկմանը ներկայանցելու դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը սահմանված կարգով կապահովի դրա ընթացքը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Կատ.՝ Հարկային վարչարարության մեթ. բաժին
Հեռ.՝ (060) 700-328